

ԱՎԱԳԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ. ԱՎԵՏԻՔ ԽՍԱՀԱԿՅԱՆԻ պոեզիան. Գրահրատարակչների ազգային միություն. Երևան, 2000, 410 էջ:

Ավետիք Խսահակյանի ծննդյան 125-ամյակը համընկավ նոր դարի գալստյան հետ: Եվ ինչպես բանաստեղծի ստեղծադրությունն իր ողջ հասակով թեակոփեց *XXI* դարը, այնպես էլ նրա ետքից խսահակյանագիտությունը: Ապացույց՝ բոլորովին վերջերս հրատարակված գրականագետ Ավագ Խաչատրյանի «Ավետիք Խսահակյանի պոեզիան» գիրքը: Գրականության պատմությունն ունի իր ներքին օրինաչափությունները, դա պատմությունն է և ընթացիկ գրական պրոցեսի: այդ պրոցեսը կերտող ժամանակակից հեղինակների, բայց և գա առավել չափով պատմությունն է գրական հավերժ կատեգորիաների՝ այն հեղինակների, որոնց հանդեպ ժամանակը անուժ է, ընդհակառակը, ժամանակը մի ինչ-որ հանդույցում դառնում է նրանց դաշնակիցը: Շատ դարերի խորքից մեզ հետ է այսօր Նարեկացու «Մատյան ողբերգությունը», երկրորդ հարյուրամյակը թեակոփեց «Աբու-Լալա Մահարին», և գեռ առջեւում է հանդիպումը Խսահակյանի մյուս կոթողի «Ուստա Կարո» վեպի, Հայկական հարցը հնչեցնող «Ապիտակ գիրքի», ինչպես և բանաստեղծի իմաստուն խտացումների, ծոցատերային գրառումների հետ: Գալիս, ձևագործում է այն նշարտությունը, որ *XXI* դարը լինելու է Ավետիք Խսահակյանի դար:

Եվ այսպես, նոր դարի նախաշեմին նոր հետազոտական հայացք և նոր ընթերցում Վարպետի երկերի:

Կցանկանայի այս գիրքը բնութագրել նրա խմբագիր, ակադեմիկոս Սերգեյ Սարինյանից փոխառած մի արտահայտությամբ, որ այն ասես գրված է միաժամանակ և գիտնականի, և՝ բանաստեղծի գրչով, ընդ որում, գիտնականը հանգամանությունների մեջ աւենում հասկացություններ ու կատեգորիաներ, որոնք արտացոլում են ոչ միայն գիտության պատմության դինամիկան, այլև հասարակական գիտակցությունը կազմակորող գաղափարախոսությունն ու մեթոդոգիան» (էջ 3–4):

ստեղծագործական դրդապատճառները՝ կապված Խսահակյանի կյանքի այս կամ այն դրվագի հետ. իսկ բանաստեղծը խանդագոված վերլուծում է Խսահակյանի չափածոյի տեքստերը:

Գրքի էջերում երեսն է բերվում բանաստեղծի կյանքի և գործի հրաշալի իմացություն. ինչը վկայում է այն մասին, որ Խսահակյանը Ավագ Խաչատրյանի «Հին սերն» է: Դեռևս 1985 թ. նա հրատարակեց իր առաջին Խսահակյանագիտական աշխատանքը՝ «Ավետիք Խսահակյանի պոեզիան»: Իսկ 1987 թ.՝ «Ավետիք Խսահակյանի հայրենական պոեզիան»: Սակայն գրախոսվող գիրքը չպետք է համարել սոսկ վերոհիշյալ գրքերի միասնական հրատարակություն. սա չափս մշակված բազում նոր հատվածներով լրացված, շատ և շատ բաներ նորովի գնահատված և մեկնաբանված հասոր է: Ինչպես գրում է այդ առնչությամբ հեղինակը, «Ժամանակները իրենց կնիքն են դնում մտածողության համակարգի վրա, շրջանառության մեջ աւենում հասկացություններ ու կատեգորիաներ, որոնք արտացոլում են ոչ միայն գիտության պատմության դինամիկան, այլև հասարակական գիտակցությունը կազմակորող գաղափարախոսությունն ու մեթոդոգիան» (էջ 3–4):

Խսահակյանի պոեզիայի մասին Ավագ Խաչատրյանի ուսումնասիրությունն առավել հետաքրքրությամբ է կարդացվում այն պատճառով, որ յուրաքանչյուր բանաստեղծության ստեղծման պատմությունը, նրա վերլուծությունը կառուցվում է բանաստեղծի կյանքի պատմության հենքի վրա: Զկա ոչ մի բանաստեղծության ընդհանուր կամ գեղարատիկ մեկնաբանություն, Խսահակյանի պոետական երկերը բերվում են

անխղելի կապվածությամբ նրա «Հիշատակարանի», խոհականի, օրագրության, նամականու, ծոցատեղային և զավերագրական բնույթի այլ գրառումների հետ: Եվ դա, Ակամած հսահակյանի աշակերտական շրջանի բանաստեղծություններից, Շուշանիկ Մատակյանին ուղղված առաջին քնարական խոստովանություններից, Հայ Փիդայական շարժումը ջատագովոր մարտական երկերից մինչև բանաստեղծի կյանքի վերջին գործերը: Մեկ միասնության մեջ է մեկնարանվում կյանքն ու ստեղծագործությունը, փորձէ արվում գտնել քննարկվող ամեն բանաստեղծության կոնկրետ կապը հսահակյանի կյանքի այս կամ այն իրադարձության, քայլի, դրվագի հետ:

Եվ, ըստ ամենայնի, Ավագդ Խաչատրյանը Իսահակյանի կյանքի և գործի վերաբերյալ իր դատողություններն անում է ելնելով ոչ միայն Վարպետի մասին եղած ստվար զրքերից ու աշխատություններից, այլև մանրազնին հետագոտում է նրա արխիվը՝ առաջին հերթին եղիշե Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպող հսահակյանի ճեռադրային ֆոնդը: Ինչպես նախորդ մենագործություններում, այս գրքում ևս հեղինակն առաջին անդամ գիտական շրջանառության մեջ է դնում հսահակյանի վաղ, աշակերտական և լայպցիդյան ուսանողական շրջանում դրած մի շարք բանաստեղծություններ: Թող որ այդ բանաստեղծությունները դեռևս չունեն արվեստի կատարելություն, սակայն դրանք ունեն ուրույն արժեք որպես մի որոշակի աստիճան ցույց տվող իսահակյանական բանաստեղծական հանճարի ձևավորում: Այս շարքի մեջ կան շատ նորույթներ, ինչպես, օրինակ, Նիբցեի «Հիմնկյանքին» բանաստեղծության հսահակյանի թարգմանությունը, որը ժամանակին երիտասարդ բանաստեղծը Լայպցիդից ուղարկել է «Մուրճի» խմբագիր Ավետիք Արասիանյանին: Այս առումով առավել արժեքավոր են Ա. Խաչատրյանի վերլուծությունները կապված հսահակյանի «Հայդուկի երդեր» շարքի բանաս-

տեղծությունների և մինչ օրս ամբողջությամբ չհրապարակված «Մասսա Մանուկ» մեծածագալ (4000 տող) պոեմի հետ:

Իսահակյանի հայրենասիրական պոեղիան հայ գրականության ֆեռամենալ երկույթներից մեկն է: XVIII, XIX, XX դարերի ոչ մի այլ բանաստեղծ այդպես հետեղականորեն չի կառուցել իր բանաստեղծական աշխարհը՝ համաշունչ հարազատ ժողովրդի քաղաքական ճակատագրին, ինչպես հսահակյանը: Նրա ողջ ստեղծագործությունը տոգորված է Հայաստանի ազգային անկախության գաղափարով: Նա առաջինը հայ դասական գրականության մեջ հնչեցրեց Հայդուկային պայքարի կոչը և պատկերեց այդ պայքարը 1895–1910 թթ. իր գործերում: Նա առաջինը փորձեց ստեղծել հայ ազգային ազատամարտի նոր փուլի էպոսը, հանձինս իր «Մասսա Մանուկ» պոեմի: Եվ ինչպես խոստովանել է հսահակյանը ՀՅԴ 10-ամյակին նվիրված «Գողթան քնարը, որ պատության...» պոեմի բնաբանում,

Սազը չի թողնում, որ կտրիճ դառնամ,

Թուրքը չի թողնում, որ դուսան դառնամ...

Նոր սերնդի ընթերցողը, իսկ իր գիրքը հեղինակն առաջին հերթին ուղղում է երիտասարդ սերնդին, չգիտեշատ մանրամասներ հսահակյանի կյանքից կապված հայ ազատամարտի հետ, այն, որ կյանքի 20 տարին նոր բոլորած հսահակյանը բանտարկվում է և մեկ տարով կալանավորվում երևանի բերդում: Ապա նոր լույս ընծայված «Երդեր ու վերքեր»-ի հեղինակին աքսորում են Օդեսա և այնուհետև մշտատև ոստիկանական հսկողություն, խուզարկումներ, մանրակրկիտ գրաքննություն նրա դրած ամեն տողի հանդեպ: Եվ կրկին, արդեն 1908 թվականին, նոր ճերբարկություն և կալանք Թիֆլիսի նշանավոր Մետեխի ամրոցում: Եվ խուզափելու համար սիրիրյան մոտալուս աքսորից՝ տարա-

գրություն 1911 թվականից ի վեր: Բանաստեղծի կյանքի այս բոլոր վճռորոշ իրազարձությունները պատկերված են թե՛ կյանքի հենքի, թե՛ կոնկրետ գեղարվեստական երկերի հիման վրա: Էական և Հանգամանալից վերլուծության է ենթարկված Ազետիքի և Ծուշանիկի հայկական Բեատրիչեի սիրավեպը: Այդ առաջին, դրժված սիրո պատմությունից հայ քնարերգությունը, իհարկե, մեծապես շահեց: Ինքնին նրանց փոխհարաբերությունների պատմությունը այնքան ոռմանտիկ էր առաջին շրջանում և դրամատիկ ու հոգետանջ հետագա փուլերում, որ կարծես հատուկ հորինված էր գեղարվեստական հնչեղություն ու քնարական խորություն հաղորդելու համար երիտասարդ հերոսների կյանքի պատումին: Այնպես որ, գրախոսվող գիրքը հավակնում է դառնալ մի յուրովի ուղեցույց հսահակյանի սիրո աշխարհի հայրածի ու անհայտ ճամփաններով: Ավագ Խաչատրյանին հաջողվել է մի միասնության մեջ վերլուծել հսահակյանի բանաստեղծական համակարգի բարդ կառույցը, ցույց տալ նրա ձեւագորման, հղկման ու փայլատակման էվոլյուցիոն գործնթացը: Թե ի՞նչ ճանապարհ է անցնում հսահակյանի բանաստեղծական տողը՝ Գեորգյան ճեմարանի ուշիմ սանի առաջին քայլերից մինչև հայ հեղափոխության և Ազատամարտի երդվալ երգչի հայ-գուսանի մարտական խրոխտ երգը, մինչև համայն հայության նահա-

պետի՝ Վարպետի իմաստուն, Հավիտենության շնչով լցված տողը: Իսահակյանի ստեղծագործությունը մեր ժողովրդի մեծագույն ներգրումներից է Համաշխարհային պոեզիայի հոգևոր գանձարանը, մեր ժողովրդի ազնվականության հավետ գործող վկայագիրը: Մեկ դար և քսանհինգ տարի նաև հայ ժողովրդի հետ է, և կլինի նրա հետ հավիտյան:

Ամեն ինչից, գրվածքի շարադրանքից, հեղինակի քնարական զեղումներից, վերլուծություններից անվերապահորեն զգացվում է, որ Իսահակյանը գրականագետի պաշտամունքի առարկան է, մշտական հիացմունքի ակունքը և, չնայած այդ հանգամանքին, Ավագ Խաչատրյանն, ի տարրերություն մեր որոշ հին ու նոր քննադատների, չի անում անիմաստ հայտարարություններ այն մասին, թե ո՞վ է մեր «ամենամեծ հեղինակը», «ամենայն հայոց բանաստեղծը» կամ թե «մեծերից ամենամեծը» և ալին: Գրականագետի կոչումն է Հանդիսանալ կապավորը գրողի և ընթերցողի միջև, Աևակի խոսքերով՝ ասած «Աստծո թարգմանը»: Այս մղումով է գրիչ վերցրել Ավագ Խաչատրյանը՝ մեկնարաններու գիտնականի «օբյեկտիվությամբ» ու բանաստեղծի «սուբյեկտիվությամբ» բազմադարյան հայ գրականության այլ մասերը:

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ